

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ՆՈՐ ՕՐ»

Վարչութիւն «ՆՈՐ ՕՐ» Բագրի ԳԱՀԻՐԷ

Direction du journal NOR-OR Caire Զեռագիրներն եւ չեն դարձուիր, ԱՐՏՈՒՏԵՐ Ժ. ՄԻՒՆԻԷ

ՆՈՐ ՕՐ

Լ Ր Ա Գ Ի Ր ԱԶ Գ Ա Յ Ի Ն, Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն Ո Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն ԿԸ ՀՐԱՏԱՐԱՆՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹՊՈՐԵՐԸ

ՇԱՐԱԹ 14/27 ԱՊՐԻԼ 1901

ՔՍԱՆ ՓԱՐԱՅ ՈՂՁ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 84

Table with subscription rates: Գանձիւրի համար տարեկան 50, Գանձիւրի վեցամսեայ 30, Երջակայից տարեկան 60, Երջակայից վեցամսեայ 35, ԱՐՏԱՆՇՄԱՆ ԶԱՄԱՐ, Տարեկան 18, Վեցամսեայ 10, ԲՈՒՍՈՑ ԵՒ ԿՈՎՊԱՍԻ ԶԱՄԱՐ, Տարեկան 7, Վեցամսեայ 4, ԱՍՏՆԱՐԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՆԻՔԻ Է, ԵՒ ԲՂԲԱՏԱՐԻ ՍԱՌՔԸ, Թերիւն վարչութեան վրայ է

ԱՌԻԹԸ ԳԱՆՁ ՄԸՆ Է

Այս ինչ բանին մէջ կրնայ մէկը ազէս եղած ըլլալ, ասոր համար չենք կրնար մեղադրել զինքը, թերեւս այդ բանը սովորու առիթը ունեցած չէ ան: Այն ատեն կրնանք մեղադրել երբ սովորեցնել կուզենք անոր իր չը գիտցածը ու յաւակնութենէն չ'ուզեր սովորի:

Ասկից երկու ամիս առաջ տեղույս որբախնամ ընկերութիւնները 'ի նըպաստ Հայ որբերու, ինչպէս գիտենք, թատերական ներկայացում մը տուած էին Օբերայի մէջ: Հայերուն և թէ օտարներուն մէջ տոմսեր ցրուուցան: Ինչպէս Հայերէն օտարներէն ալ գրտնուցան մերժողներ, սա առաւելութեամբ որ օտարները — իբրև հմուտ կենցաղադատութեան օրէնք ներու և անոր ամեն նրբութիւններուն — հայերուն պէս անվերջ պատուած վերադարձուցած չէին, հապա մերժելու արուեստը ինչպէս որ կը պահանջէ այնպէս մերժած էին:

Այն ատեն հայերուն այդ կոշտ վարմունքը իրենց սովորութեանը վերագրած էինք, ասոր համար ալ այնքան մեղադրած չէինք:

Եթէ Հայն ալ զիտնար թէ՛ տոմս մը մերժուած ատենը այսինչ եղանակաւ պէտք է մերժել, վստահ եղիք որ հարիւրին ու թոսունը պիտի վարուէր այն կերպով ինչպէս օտարը:

Ահաւասիկ ձեզի ապացոյց մ'ալ պիտի տամ:

Որբախնամի ներկայացման հետեւեալ օրը «Մերժելու արուեստը» վերնագրին տակ լամբագրութեան յօդուած մը զրկուած էր որուն մէջ յատակ կերպով բացատրուած էր թէ տոմս մը կամ նմանօրինակ բան մը ինչ եղանակաւ կրնայ մերժուիլ: Թողուած մը որուն օգտակարութիւնը նկատի առնելով իբր առաջնորդող հրատարակած էինք:

Եւ երբ այդ յօդուածէն ամիս մը վերջը թերթին վարչութիւնը 'ի նպաստ զիշերային դասարանի հիմնարկութեան կազմակերպեց թատերական ներկայից մը, օտարներէն աւելի հայերը մերժեցին զրկուած տոմսերը: Բայց որքան տարբերութիւն մէկ ամուսնի մէջ, չի գտնուեցաւ Հայ մը որ այցեքարտ մը և կամ նամակ մը չի կցէ, հասկցնելու համար թէ ստիպուած էր մերժելու իրեն զրկուած տոմսը:

Ահաւասիկ բան մը որ չէին գիտեր հայերը սովորեցան: Թողուած մը ըրազրի մէջ, բարոյ մը եկեղեցոյ մէջ բաւական եղանի գիտութիւն առաջնորդել ժողովուրդը:

Ուրիշ ինչիւր թէ կրնան գտնուիլ պիտի գլուխներ և կամ յաւակնոտ մարդիկ, որ կը վանին կուրօքէն ամեն ինչ որ օգտակար է, ու չ'են յարմարիք քաղաքակրթութեան տուած օգտակար գասերուն: Ոմանք կը կարծեն թէ ատանկ թիփերը անպատճառ խարազանով մտրակելու է որ ուղղութեան գան:

Ես ընդհակառակը կըսեմ թէ՛ աւելի լաւ է ազգու և ներգործիչ առիթներու առկայութեան իբրև թերութիւնները լեզուի պատշաճութեամբ և ամենայն քաղաքակրթութեամբ երեսնուն տալով:

Տեսէ՛ր կրնայ ըլլալ թէ՛ ոչ, փորձով ձեզի ցոյց պիտի տամ:

Ասկից ամիս մը առաջ 'ի նպաստ զիշերային դասարանի հիմնարկութեան վարչութեան կողմէն կազմակերպուած թատերական հանդիսին առիթ, թիկնաթուի տոմս մը զըրկած էինք սեղույս ազգայիններէն մէկուն: այդ մէկը թերեւս բանաւոր պատճառներ ունենալով մերժելու իրեն զրկուած տոմսը, հետեւեալ նամակը զրկած էր մեզ:

Գահիրե 24 / 3 1901

... Վարչութիւն «Նոր Օր» Բագրի:

Տիրաբ.

Նկատելով որ երբեմն Լսարան-Ընթերցատուն հաստատելու համար եղած նմանօրինակ ներկայացման արդիւնքն նպատակին չը գործածուին () ինչ առիթ կուտայ մերժել ձեր զրկած տոմսին:

Մնամ... Գ. Խազուլեան:

Այս նամակին մէջ՝ Պարոնը ըսել կ'ուզէ թէ ասկից տարի մը առաջ 'ի նպաստ Լսարանի ներկայացում տրուել է և զոյացած հասոյթը բըսան երեք ոսկին — որուն մէջ Պարոնը միւլի մը անգամ մասն չէ ունեցած հակառակ իր արդի խտտապահանջութեան — նպատակին չէ գործածուել:

— Հապա ինչ է եղեր:

— Եթէ Լսարան չէ բացուել, չէ՛ մի որ «Նոր Օր» մը լոյս տեսեր է, թերթ մը որ քիչ շատ օգտակար եղած է, բարեգործական և որբախնամ ընկերութեանց ազգերը, յայտարարու-

թիւնները գէթ տպելու պատին ունենալով, (քիչ մը վարը այսօրուան թիւին մէջն իսկ տպուած կը տեսնենք յայտարարութիւն մը զոր զրկած է մեզ Պ. Խազուլեանի որբախնամ ընկերութիւնը) առանց ուրիշ թերթերու նման Վարչութեան ներկայացնելու որ ինչպէ՛ս գիտենք ինչորոյ նիւթ եղած էր որբախնամ ընկ. անցեալ ընդհանուր ժողովոյ մէջ:

Երբ անդամներէն մին հարցուցած էր թէ Գահիրէի մէջ երկու հայերէն թերթ կայ, ինչու համար միմիայն «Նոր Օր» է կը զրկուին որբախնամի ազգերը, և միւս թերթին ո՛չ:

— Փողոցային թերթի ազգաբարձրութիւն կը տրուի միմե՛, կը միմայ անդամներէն մին:

— Թերեւ «Նոր Օր»ը աւելի յարմար դատուած է, ըսած էր Պ. Ալիբար:

Վիճարանութեան վերջաբանը զըրած էր Պ. Աւագեան գիտել տալով ներկայից թէ՛ «Նոր Օր»ը առանց փոխարինութեան կը տպէ յայտարարութիւնները, իսկ միւս թերթը զըրամ կը պահանջէ տպելու համար, ասոր համար է որ «Նոր Օր»ին կը զրկուի:

Հեռուն չերթանք:

Նոյն ինքն Պ. նամակագիրն է որ առաջինն ըլլալով փութացած էր «Նոր Օր»ի բարեպատեհ երևումը շնորհաւորելու և յաջողութիւն մաղթելու անոր յարատեւութեանը (տես Նոր Օր թիւ 6 Գ. Խազուլեանի ստորագրութեան ներքե գրութիւն մը ուղղեալ առ վարչութիւն Նոր Օրի): Որուն իբր առիթնապետ Գործ. Ժողովոյ Վասպուրականի որբախնամ ընկերութեան, զրկած յայտարարութիւնները և ազգերը ամենայն սիրով տպած ենք:

Այն «Նոր Օր»ը զոր կ'արհամարհէ այսօր այնքան կոյր և գոհիկ հակասութեամբ:

Ալ այսքանը բաւական է:

Չեմ ուզեր յառաջ երթալ, ինչպէս ըսի, ես աւելի օգտակար կը տեսնեմ հրապարակաւ ամիջցնել և պոպանծեցնել մեր յաւակնոտները բան թէ խարազանով մտրակել:

Իմ մտրակա՛ առիթն է ինչ համար:

Այդ նմոյշը ամիսէ մը ի վեր է պահած, և հրատարակելու փութկոտութիւնն ցոյց տուած չէինք, սպասե-

լով առիթին. առիթ մը զոր այսօր, շնորհակալ ենք, հայթայթեց մեզ Տ. Մաննեանցի կողմանէ՛ «Նոր Օր»ի այսօրուան թիւին մէջ տպուելու համար զրկուած որբախնամի հրաւերը: Առիթ մը ուրիշ կ'օգտուինք Տ. Մաննեանցի ուղղութեանը յանձնարարելու թէ՛ որբան որ իր գիտնէն կախում ունեցող Ատենապետ մը ժամանակին անպատշաճ կերպով վերաբերուած է դէպի մեզ, դէպի «Նոր Օր»ը, բայց մենք դարձեալ առանց կարեւորութիւն տալու այդպիսի ողորմելիներու արարելին, կը շարունակենք հիւրնկալել մեր արհամարեալ թերթին մէջ, յոսուն որբերուն զրկուած գրութիւնները, կցելով միմիայն երկսող գիտողութիւն մը որ պէտքի միանգամ ընդմիջտ ամիջուցած և դաստիարակած ըլլանք մեր յաւակնոտները: Վերջապէս բարոյախօսէ մը փոխունելով կըսեմ թէ՛ դիտողութիւն մը որ ֆան պատշաճօրէն, առիթին ու ժամանակին ըլլուի, այնքան անգործիչ և ֆաղցր կըլլայ:

Ուրեմն առիթը գաւճ մ'ընէ:

ԱՐԴԻ ՆՃԱՆԱԽՍՈՒԹԻՒՆՔ

(Շար. Ոսկորդ թիւէ՞՞)

Նոյն բանը չենք կրնար ըսել մարդուն համար, նա իր բնական կիրաններուն պատրաստութեանը համեմատ, կամ ուրիշ այլևայլ պատճառներու, օրինակի համար պատերազմի, ազգատեղեան և այլոց համար, հետեւած է այն երեք կերպ միութեանց զորս թուեցի: Բայ աստի, արարչութեան մէջ ինքն է միայն որ այդ երեք կերպերն ալ միանգամայն գործածած է:

Միայն է կարծելը թէ բարոյականութիւնը ամուսնութեան այդ երեք կերպերէն միոյն մասնաւորաբար կցուած է: Բարոյականի բոլոր ինչորները յարաբերական են: Խնդիր է միայն հետազօտել թէ ամուսնութեան ո՛ր եղանակը աւելի յարմար ու պատշաճ է մարդուն վախճանին և մանաւանդ ընկերութեան բարոյն:

Բարոյախօսներու կարծիքին նայելով, միակնութիւնը պէտք է որ ամուսնութեան մէջ ընդունուած միակ եղանակը ըլլայ: Եթէ սեւերուն մէջ թուոյ մերձաւոր հաւասարութիւնը նկատողութեան առնենք, եթէ մեր կողմապահաններն եզոզ ամենէն կատա-

ընկառնող կապիկներու բարբերը գիտենք, արգարե մարդկային սեռը միակնութեան սահմանուած ըլլալը կը թուի: Բայց ամեն ժամս նակ այժմ իրաւունքին վրայ գերակշռութիւն ունեցած է: Ի սկզբան սնանակական այժմ, վերջէն խելքի այժմ: Հզօրները հոգը իրենց ձեռքին տակ ժողոված են, տկարները զըրկուած են իրենց իրաւունքին: Քիչ ատենէն կիներն ալ հոգին պէս եզած են. մին յափշտակողները անշուշտ խեղճ չէին ընել միւսն ալ զըրաւմը ածելու:

Ասկէ յառաջ կուգոր հզօրներու ձեռքին մէջ կիներու համագրաւում մը ի քնաս աղքատներուն: Ոմանք պէտք եզածէն աւելի ունեն, մինչ ուրիշներ բաւական չ'ունեն:

Շատ վերջերք միայն երեւն կ'ուզայ ամուսնական խնդիրները կարգադրող իրաւունքը. Զրկեալները համագրաւուողներուն լուծը կը թօթապեն և, անհանդուրժելի կացութեան մը վերակումէն վախճալով, կը սկսին օրէնքներ գնելու հետամուտ ըլլալ և սահմանագծել զայն:

Տխուր բան է հաստատելը որ օրէնքը հարստահարեալ սկարութեան հնարքն է, որ ուժին պէ՛մ կը նիզակակցի արեւին տակ իր տեղը գրաւելու համար մարցացի:

Ամուսնութեան առաջին ծանօթ ձեռ այն եզաւ ինչ որ կը կոչեն դիւցազանց եզանակիր, այս է առեւտուածը: Այս եղանակին կիրառումը շատ պարզ էր. այրը իրեն յարմար դատած կիներ կ'առեւտուէր քի ամեն բան կը ընէր:

Ամենէն հին օրէնքները, Մանոն, Հնդկաց մէկ աւանդութիւնը արտագրելու ատեն, կ'ըսէ թէ որ և է ազատ մարդ պէտք է որ, իր ծառայներուն զուրը անցած, առեւտուէր իր կիներ, և իրեն զե՛մ դնող որ և է մարդ սպաննէ:

Առեւտուածութեամբ ամուսնութեան այս ձեռ շատ երկար ժամանակ տեսց. նոյն իսկ միշտ և մեր ժամանակը հառաւ, և մինչև ցարգ մէկ քանի երկիրներու մէջ տեղի կ'ունենայ: Սիւսայն միշտ չ'պահեց իր սկզբնական բիրտ պարզութիւնը: Երբ բարբերը սկսան մեղմանալ, առեւտուածը կ'ուն ծնողաց գործակցութեամբը տեղի կ'ունենար. ընդդիմութիւնը կեղծ էր միայն, ծնողաց կանխաւ ստացուած հաւանութիւնը կ'ուզար կը հաստատել յափշտակութեան կեղծիք մը:

Հիմալայի Ռոմալէնի և Պոնթոնի մէկ քանի հովիտներուն մէջ, Աւստրալիոյ, Կրօնէլանտայի, Հրոյ երկրին, Նոր Զելանտայի, Ափրիկի մէջ և դեռ ոչ բազմաթիւ թեւազրեթեալ գրեթէ բոլոր երկիրներու մէջ, կեղծ առեւտուածը գեա զոյգութիւն ունի ցարգ: Օրիսայի ափանց վրայ, կերէի թէ կեղծ առեւտուածը կ'ուի ըստը երեւոյթ մը կը պահէ գեա. նմանապէս կեղծուական Հնդկաստանի Ռոքերու մէջ:

Նոյն իսկ յառաջացած ժողովրդաց մէջ, տարօրինակ սովորութիւններ կը տեսնենք, որ առեւտուածը ամուսնութեան նախնական ձեռ կը յիշեցնեն:

Մօզը, իր «Կողկաւ և ժողովուրդը» անուն գրքին մէջ, կը պատմէ թէ Չլքեզիտանի մէջ ամուսնութեան մը որոշումը արեւելուն պէս, ինչոյք մը կը տրուի, որուն մէջ փետացուն, մէկ քանի կաշմուած ընկերներու հետ, պէտք է որ սրտահին մէջ յարձակի և բռնի իր նշանածը յափտակէ. և ահա այս է որ օրինական ամուսնութիւնը կը գոյացնէ:

Անգղիոյ Կալլէի նահանգին մէջ, սովորութիւն մը որ մինչև ԺԲ. դար զոյգութիւն ունեցած է, վերջին նշմարներէն մին է առեւտուածը ամուսնութեան: Հարսանեաց օրը, փետացուցուն, ձիւտը բարեկամներէն ընկերացած կուգայ իր հարսնացուն կը խնդրէ: Կը մեր-

ծեն: Այն ատեն տեսակ մը հարսնացուի ետեւ հարսնացու կը կազմակերպուի, որուն ազդեցութիւնը շատ նկարչական է: Կը տեսնեն հարսնացու մարդիկ որ կը բառարաւեն, կ'իջնան, կ'եղչեն, կը ճչն կը սրտան, ի' մեծ գրասան հանդիսատեսներու: Հետագրումը կը վերջանայ հարսնացուի բռնութեամբ, և ամեն բան կ'աւարտի ինչոյքով մը:

Ամուսնութեան այս ամենէն վաղնջուց ձեռն բոլոր այս հետքերը սրտնց կը հանդիպենք Հնդկաստանի և ուրիշ երկիրներու մէջ, թոյլ կուտան մեղ իրաց վաղմի վիճակը վերակազմել:

Այսպէս ամենէն աւելի ընդհանուր կերպով ընդունուած կերպը առեւտուածն էր: Նոյն սկզբունքը որ սեպհակահնութիւնը կը կառավարէր, կը վարէր նաև ամուսնութիւնը: Մարդը տէր կ'ըլլար իր արտին գրաւելով զայն և իր գրագիրները հեռացնելով: Նոյնպէս կը վարուէր կիները համար:

Շահեկան պիտի ըլլար բազմաթիւ անուսնատեղութիւն մը ընել սեպհակահնութեան իրաւունքին և կ'ուն թան իրաւունքին վրայ: Պիտի հաստատելիք որ հիւսնուին, և թէ բազմաթիւութեամբ մէկ քանի ժողովրդաց մէջ ամուսնութիւնը ուրիշ բան չէ եղած բայց սեպհակահնութեան մէկ ձեռ: Հաստատութիւն որ շատ պատուարի չէ կ'ուն, մանաւանդ իր յախտնական հալածչին (նարսահաւարչիմ) համար:

Ահա այսպէս Գերմանաց մէջ զոյգութիւն ունէր գնմամբ ամուսնութիւնը, որ շատ մէկին և բացորոշ երկու գործողութեանց կը բաժնուէր. Ա. վաճառուէն կ'ուն, և Բ. վաճառեալ առարկային յանձնումը կամ աւանդումը:

Այս կրկին գործողութեանց առաջինէն ծագում առած է նշանախօսութիւնը: Բուն վաճառումը թէ թէ խանգարուած է և անոր տեղը բռնած է նշանախօսը:

Գնմամբ ամուսնութեանց մէջ, կ'ուն գիներ անփոփոխապէս որոշուած էր տան երեք գանարի ճակատագրային թոյն: Այս տան երեք թուանշանին պատճառը ժամանակաց մթութեան մէջ կը կորուսի:

Այս մասին ամեն ինչ որ գիտենք սա է որ, առանց կարենալու բացատրել, կը պատահինք այդ թուոյն միջին դարու և նոյն իսկ արդի ժամանակաց մէջ: Լուի ԺԶ. ի ամուսնութեան ատեն, տան երեք գանարի խօսք կար: Այսօր սոսկ Պօրտոյի, Տիյոնի և Պառոսայի մէջ գեա զոյգութիւն ունի:

Ըսի որ բարոյականը բացարձակապէս անկախ էր ամուսնութեան եղանակին: Մարդ կրնայ բազմակի ըլլալ կամ նոյն իսկ բազմաթիւութեանը ընդունիլ և անապիտ բարոյականի տէր մարդ ըլլալ: Խնդիր է միայն գիտնալ թէ որ զոյգութիւնը ընդունիլը լաւագոյն է, որն է յարմարագոյնը մեր բնութեան և մեր սպրեւու եղանակին, և անգամ մը որ այդ զոյգութիւնը հաստատած և ընդունած ենք, անոր հետեւի՛ վճարանօրէն զայն ընդունելով:

Խ. ՋՕՐԿՊ ԹԱՐԳՄ. Յ. ՍԷԹԵԱՆ (Շարունակելի)

ՍՈՒՅԵՂ ԵՒ ՆՃԱՆ

Հայրենիքի երկու գծազգ զոհերն են, մին Մշեցի իսկ միւսն Սեբաստացի:

1894 թուականին Հայաստանի խորերէն՝ սովալլուկ գալի մը նման զլտորելով կուգար կիլիսար փարաւոններուն երկրին մէջ Շուքրի Չավուշ,

հաշիւը ներկայացնելու համար իր անհամար մեղաւորութիւններուն, ճիշդ այն միջոցին որ Հայաստանի արինահեղ ջարդերը ամեն Հայ վրէժխնդրութեան սրտով զինած էին, նամանաւանդ Մուշեղը և Նշանը որոնք այնքան կորուստ կրած էին, մին իր մայրը, միւսը իր աղգահանը կորուսած ըլլալով:

Մուշեղի և Նշանի վրէժխնդրութիւնը աւելի կը գրգռուի երբ այդ գաղանարարոյ հրէշը Լիտի պարծանքով մը կը պատմէ իր գործած վայրագութիւնները հայրենիքի մէջ ամենց ընտանեաց հանդէպ: Մուշեղը և Նշանը չեն հանդուրժիր այլ ևս, արեւմտեալ մասք արհամարհելով մահը՝ կորոչին հաշիւին մարքել այդ հրէշին հետ, հերքել է որ իրենք անձնուրացներ, պարտաճանաչ զոհեր պիտի ըլլան:

Արգարե Շուքրիի դիակը գետին կը սխալի, ու քիչ յետոյ աւագ Մուշեղին անկենդան դիակնալ Մէնչիէի կառափնատի անողոր շղթայէն առկալս կը տատանը իսկ Նշանը Սուսանի աւազուտ անապատներու հրատապ կլի, մային տակ մշտնջենական ատժանակիր աշխատութեան վճիռը կընդունի և այն օրէն սկսեալ վատի Հուլիսայի մէջ մոռցուած, զժրագլին վրայէն վեց տարիներ սահած կանհետնան, խելով կեանքին այն լաւագոյն չըլանը որ սահմանաւած է մարդուն համար ըլլալ չըլան մը՝ վայելքի և քաղցրութեանց:

Ղեկը՛կրս իմանալով որ Նշանի աչքերը սկարացած ըլլալուն պատճառաւ հոս «Թուրա» փոխադրուած է, տեսնելու փափաքով հոն գնացինք, ափսոս, բոլորովին տարբեր գտանք ան, տեսնելու զիւրքը զալկացած, աչքերուն վայլը մարած, բերբերուն մեծ մասը ճերմակով ծածկուած, և իր աշխատութեանը միանալով վիշտերը ֆիզիքապէս բայքայած էին իր անձը «Ինձի կուգայ թէ — կ'ըսէր — կեանքս շատ կարճատե պիտի ըլլայ իթէ ազատուելու յոյս իսպառ անհետի, այդ յուսոյ նշոյն է որ դեռ գերեզմանի եզրը կը պահէ գիւ» թէ և գործին զժուարութիւնը և անմիջական յուսոյ մը անհասանկանութիւնը ներքնապէս ըմբռնած, բայց պարագան մեղ կատիպէր յոյս և բաշխելութիւն ներշնչել իրեն:

Տխուր ապաւորութեան մը տակ մէկնելէ վերջը, իմացանք թէ իր ընտանեաց կողմէ Ն. Բ. խտիվէն գրթութիւն պիտի հայցէին անոր մասին, ու յետոյ խնդրել այժմէնութիւն ստացած ըլլալու երեւոյթ մը ունեցաւ, մեղ աւելի բերկրաւթ պարագայ մը եղաւ երբ ան շեշտուած տեսանք Եկեղեցոյ բեմէն ալ: Զատակի կերակին Գեր. Ս. Առաջնորդ հայրը իր քարոզին մէջ կը յիշէր թէ Ն. Բ. խտիվէն բանտարկեալ Նշանին համար զթութիւն հայցելը քաղցր և գերազոյն պարտականութիւն մը պիտի նկատէ: Այժմէն իսկ չնորհաւորելով իր առաջադրած գաղափարը, կը փութանք աւելցնել թէ՛ երբ Ս-

Հայրը պէտքը զգայ ո և է բարոյական աշխատութեան մը, կարող է վատահ ըլլալ թէ՛ ժողովուրդն ալ իր կարգին կրնայ օգտակար ըլլալ, հաւաքաբար խնդրագիր մը ստորագրելով, կամ՝ այլ աղբրաբերու եղանակաւ մը, բաւական է որ Սրբազանը տրամադիր գոնուի յամենայն դէպս Նորին Բարձրութեան պարզելու խնդրելը:

Հետեւաբար Առաջնորդ Հօր նպատակին յաջողութիւն մաղթելով՝ կը սիրենք յուսալ որ Ն. Բ. խտիվը ուշադրութիւն կը գարձնէ բանասիրկերոյն ֆիզիքական վատառողջ վիճակին՝ և անոր ընտանեաց ուզաւակներուն եղկելի թշուառութեանը վրայ, և զթաղով ներում կ'ընորհէ որով միայն կարելի է յուսալ անոր վերագարձը իր գծազգ ընտանեաց գիրկը, որուն համար յուսեալ շնորհապարտ պիտի մնայ ամեն Հայ սիրտ: Գթութիւն ուրիշն ս'վ իշխան:

17 Ապրիլ 1904 Կ. Ե. Գահիրէ

Ծ. Թող.— Կը հուսաւտեն թէ Այվազեան Սրբազանը Եզրպոստ գաւուն երբ Ն. Բ. խտիվին ներկայացած էր. Ն. Բ. ը սիրալիք ընդունելութիւն մ'ըրած էր Հայոց Առաջնորդին ու տեսակցութեան միջոցին ցաւ յոյսանած էր որ Մուշեղի մահուան զատուարտմանը առթիւ շէր կըրցած անոր ծառայութիւն մը մաստուցանել: Ուրբան քաղցր պիտի ըլլար իթէ Սրբազանը այդ հանդիսաւոր աւուր առթիւն օգտուելով Ն. Բարձրութեան զթութիւնը հայցել գէթ Նշանի վրայ. որուն մասին արդէն Աղգային վտրջութիւնը մեկ երկու բան ալ ներշնչած էր իրեն:

Ներողամտութիւնը կը խնդրենք մեր արագոյ ընթացողաց որ գրաշարի սկարութեան պատճառաւ Չորեքշաբթի օր «Նոր-Օր» չը կրցանք հրատարակել:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՉԱՐԸ.— Անհիմն է այն զրոյցը թէ Ռուսիոյ Չարը իր գահէն պիտի հըրաժարի եզեր:

ՊՈՒՂՂԱՐԻՍ.— Այնփուլաս վաշա պիտի մեկնի Պուլղարիոյ սահմանագրութեամբ՝ ստուգելու համար թէ Պուլղարիա իր սահմանագրութեանը կը զօրացնէ թէ ո'չ:

Թուրք կառաւարութիւնը՝ յեղափոխական կռիւթէի պետերէն Պ. Սարաթֆի բանտարկութիւնը պահանջած է:

Սիւսիք.— Պուլղարիոյ սուղակապիտաները՝ Մանասթըրի Պարթէնիւս կախազուրոք սպաննեցին:

Քիչնէր.— «Սուսթ Աֆրիքն» թերթի խմբագիրը մեկ տարի բանտարկութեան զատապարտուեցաւ Լօրտ ֆիլնէրի պատուոյ դեմ իր թերթի մէջ յարձակում ըրած ըլլալուն համար:

ԹՕԼՍԹՈՅ.— Ռուս կառավարութիւնը Թօլսթոյի լուսանկարները

արդիւր է ծախել զբազմաճանաչութիւնը:

Ե՛կե՛ք: Ե՛կե՛ք մէջ խոտիւթիւններ աւելի սննդամեղ հն:

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ուրախութեամբ կիմանանք թէ Ամերիկեան աշխարհաճանօթ ապահովագրական ՏՆԻՄԻՆՈՒԼ ԼՅՈՒՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ Գահիրէի մէջ զերգործակալութիւնը յանձնած է Տիար Գեւորգ Եկուանի, և թէ թերթիս նախկին աշխատակից Տ. Յ. Ալփիար նոյն գործակալութեան մէջ կարեւոր պաշտօնի մը կոչուած է:

Վարչութիւն
Նոր Օր Լրագրոյ
Ի Քաղաքիս

Կը խնդրուի . . . Վարչութիւնէդ որ հաճիր ներկակ Ազգը հրատարակել Լրագրոյդ շաբաթ օրուան թուոյն մէջ ի դիտութիւն Որբախնամիս ընկերաց:

Ի դիմաց վասպուրականի Որբ. Ընկ. Ընդհ. Ժողովոյ դիւանի, ԱՏՆՆԱԿԳԻՐ ԱՏՆՆԱԳԵՏ Յ. ՍԷԹԵԱՆ Մ. ԱՆԱՆԵԱՆՅ

Ընկերութեանս ընդհանուր ժողովոյ ծանօթ բացառիկ նիստը տեղի պիտի ունենայ յառաջիկայ կիրակիէ, 28 ապրիլ, առաւօտեան ժամը 10ին ընդ նախագհ. Ս. Առաջնորդ հօր, ազգ. Առաջնորդարանի սրահը:

Օ Ր Ա. Կ Ա Ր Գ.

1. — Վերաքննութիւն կանոնագրին.
 2. — Ընտրութ. Ընդհ. ժողովոյ դիւանի Բ. Առնապարիս:
- Կը խնդրենք, Տէր, որ բարեհաճիր ներկայ գտնուի սոյն կարեւոր նստին և կատարել Ձեր ընկերութեան պարտականութիւնը:

Ընդհանուր ժողովոյ
Առնապարիս Առնապետ
Յ. ՍԷԹԵԱՆ Մ. ԱՆԱՆԵԱՆՅ

Ա. Չ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ

(Շար. Նախորդ թիւէն և վերջ)

Յօդ. 97. Առաջնորդի ընտրութիւնը նոյն և նման Պատրիարքի ընտրութեան, Գաւառական Ընդհանուր ժողով կ'ըլլայ. և ընտրութեան տեղեկագիրը տեղոյն խան ժողովոյն միջոցաւ Պատրիարքին կ'ուղարկուի: Պատրիարքը կեցրոնական վարչութեան խան ժողովոյ համահաճութեամբ կ'անուանէ զԱռաջնորդը, և Բարձրագոյն Դրան իմաց տալով պաշտօնական հրամանագիրը կ'ընդունի:

Յօդ. 98. Գաւառական ժողովները կեցրոնական վարչութեան ժողովներուն վերաբերեալ արժանազան համեմատ պիտի կազմուին, և պաշտօնին ու պարտաւորութիւնին նոյն և նման են:

Հ Ր Ա. Ի. Ի Ր Մ Ը

Քաղաքիս մէջ գանաւոր հայ գերատնական խմբի մը աշակցութեամբ երկուստարգ դերասան մը, Պ. Սմբատ Թէրզեան, յառաջիկայ Մայիս 3ին ներկայացում մը կուտայ ի Շարէ Ապա-Իւլ-Աղիզ Եգիպտական թատրոնին մէջ ի նուազ իրեն: Թատերական հողին ծանօթ երաշուութեան մէջ, այդ արուեստագէտը քաջալիւրեւ համար ազգայիններու կողմէ ցոյց արուած փոյթ մը ցօղոյ կաթիլ մը պիտի ըլլար ինկած այդ գետին վրայ և սակաւիկ մի զովայնող այդ ցամաքութեանն տառապող հայ արուեստագէտները:

Ինչպէս յայտնի է ցանցառ կրեկոյթներու մէջ քանի մը անգամ բեմի վրայ երեցող այս երիտասարդ արուեստագէտը անցեալ տարի. Եսկոյի գծուարակներու դերը յաջողութեամբ կատարած է Ֆասուլեանի ներկայացուցած Օթէլլօյին մէջ:

Եսկօ հրէշաւոր մարզն է, նախանձի, փառասիրութեան մէջ խարուղի կատաղութեան, դիւաշունչ դուադրութեանց մութ ներկայացուցիչը, որուն հողին հազար անգամ աւելի սե է քան իր վեհանձն, բայց նախանձատանջ զօրապետին դէմքը: Եսկօն անհաւատալի չարն է, առաքինութեան և ազնուութեան յաւիանական անողորմ թշնամին, մարդկային սրտին ամենատակաւի ռիսկաւորութեան տիպարը, խաւարին մէջ անդադար զարծող սիրազրուծ ծառան, որ իր հողին հինցած լաթի մը նման ցեխին մէջ նետած է և զոր փառաց նախանձը այն ատիճան մուրհեցուցած և կուրացուցած է՝ որ կը հաւանի որ առժամայն բոլոր աշխարհն կ'ործանի և իր փրատակներուն տակ ծածկէ իր ամօթը:

Ահա այսպիսի դերի մը մէջ յաջողութիւն գտած գերասանի մը համար է որ կը համարձակինք ջերմա-

Բայց Գաւառական ժողովներուն անգամնոց թիւը՝ իւրաքանչիւր վիճակի համար միանգամ պիտի սահմանուի, ամեն մէկ գաւառի բնակչաց թուոյն համեմատութեամբ: Մինչև որ Ազգային տուրքը գաւառներուն մէջ օրինաւոր կերպիւ հաստատուի, Տէրութեան առաջին և երկրորդ և երրորդ աստիճանի տուրք տուող անձինք միայն պիտի ընտրեն Գաւառական Ընդհանուր ժողովոց անդամները: Եւ այս ժողովներուն կազմութեան կերպը՝ իւրաքանչիւր վիճակի բնակչաց թուոյն նայելով, կեցրոնական վարչութիւնը պիտի որոշէ, Առաջնորդաց հետ խորհրդակցելով:

ԳԼՈՒԻ Ե.

ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ
Յօդ. 99. Ազգային Սահմանադրութեան հիմնական սկզբունքը անփոփոխելի են: Բայց երբ փորձառութեամբ ինչ ինչ տրամադրութեանց փոփոխութիւնը հարկաւոր գտուի, Ընդհանուր ժողովը՝ Սահմանադրութեան հաստատութեան հինգ տարի ետքը՝ վերաքննութեան Յանձնաժողով մը կը կազ-

մինս յանձնարարել յառաջիկայ երեկոյթը տեղոյս թատերասրահի, և կը յուսանք որ վայրկեան մը Եսկօ եղած ըլլայուն համար, երիտասարդ արուեստագէտը չպիտի բախի ժողովրդին հակահրական զգացմանց և պիտի վայելէ լիուրի սիրայօժար քաջալիւրութիւն մը որ, ինչպէս ըսինք յառաջագոյն, թատերաբեմի անջրդի ամայութեան վրայ ցօղած անձրևի կաթիլներու ազդեցութիւնը պիտի գործէ:

Յ. ՍԷԹԵԱՆ

Կ. ՊՈԼՍՈՅ ՅՈՒՆԱՅ ՊԱՏՐԻԱՐԿԸ

Կ. Պօլսոյ յունարէն թերթերը նոր մամուլամասնութիւններ կուտան Յունաց Տ. Կոստանդինոս Պատրիարքին հրատարակուած պարագաներուն վրայ: Խան ժողովոյ նորընտիր չորս անդամները: Ընտրութիւնը վաւարացոյ թէրթերն Յունաց Պատրիարքարանին յանձնուելէ ետքը, Սինոդի և Բաղարական ժողովի անդամները գումարուներ ընկելով սկսան խորհրդակցութիւններ կատարել: Երեքշաբթի օրը յիշեալ ժողովները օրէնքին է. յօդուածին համաձայն գումարուեցան նախագահութեամբ Սինոդին նախանգամ Էսիրիլի մետրապոլիտին, և պահանջեցին Պատրիարքին որ հրատարակուի տայ, « որովհետեւ իր ֆիզիքական և մտաւորական ոյժերը անբաւական էին: » Սակայն Տ. Կոստանդինոս Պատրիարքը մերժած ըլլալով, երկու ժողովները Թի (բացակայ) զեմ 14 ձայնով Պատրիարքը հրատարակուցին և ինքիբը անոր իմաց տուին: Այս մասին պատրաստուած մագալթան Է. Գրան հաղորդուեցաւ յաջորդ օրը. կայս, կառավարութիւնն ալ կրօնական գործոց տեսուչ Չիվեր պէյի միջոցաւ համահայնութիւն մը գոյացուցելու օգտին, սակայն 14 ձայնի մեծամասնութիւնը պնդելով Պատրիարքին հրատարակուած վրայ, բարեկամական յորդորներ տուեցան Տ. Կոստանդինոսի, հրատարակու և յայտնու իր ազդեցութիւնը աւազարտ պահելու համար: Ընդհակառակը Պատրիարքը ոչ միայն չհրատարակու, այլ և մասնակցեցաւ կրօնական արարողութեանց, և յանդիմանութիւններ ուղղեց մեծամասնութեան ութ մետրապոլիտներուն, ըսելով

Թէ անոնք կը թերանան իրենց կրօնական պարտաւորութեանց մէջ: Ասոր վրայ մեծամասնութիւնը պատասխանեց թէ, հրատարակուած Պատրիարքը օրինաց զեմ կը գործէ. կրօնական արարողութեանց մասնակցելով և նոյն իսկ յանդիմանութիւններ ուղղելով: Վերջապէս մեծամասնութեան որոշումը կայս. կառավարութեան կողմէ վաւարացուած ըլլալով, գաւառական նախարարութեան կրօնական գործոց տեսուչ Չիվեր պէյ ուրախ օրը Ֆէնիք երթալով Պատրիարքին հրատարակուած պաշտօնական յանձնեց: Այդ պաշտօնագրին ընթերցումն ետքը, Պոլսոյ մետրապոլիտ Տ. Կաթանաչ երկու ժողովներուն կողմէ Պատրիարքական Տեղապահ նշանակուեցաւ, և յետոյ զանազան կարգապահութիւններ եղան բառատուն օր ետքը նոր Պատրիարքին ընտրութեան համար կազմուելիք ընտրողական ժողովին Պօլսոյ թաղերուն և գաւառներուն կողմէ կարգուելիք ներկայացուցիչներու ընտրութեան նկատմամբ:

1901 Յունիս 1-ից Պարիզում կուրի լոյս տեսնել հայերէն լեզուով

« ԺԱՄԱՆԱԿ »

Հանդէս գրական, հասարակական, գեղարուեստական, քաղաքական:

ԺԱՄԱՆԱԿը կուենայ այն բոլոր բաժինները, ինչ որ ունին կարգապահ գրական հանդէսները. առանձնապէս ուշադրութիւն դարձնելով գիտական ու գեղարուեստական բաժիններին վրայ:

ԺԱՄԱՆԱԿին աշխատակցելու պատրաստակամութիւն են յայտնել բազմաթիւ հայ և եւրոպացի յայտնի հեղինակներ, որոնց երկերը արդէն ստացել է խմբագրութիւնը:


ԺԱՄԱՆԱԿը բազմաթիւ կը լինի 5 ապարական թերթերից (80 էրես La Revue et Revue des Revues հանդիսի դերքով):

ԺԱՄԱՆԱԿի առաջին համարը լոյս կը տեսնի ճիշդ 1901 թուականի յուլիս 1ին և ներկայ թուականին կը հրատարակուի երկու ամիսը մի անգամ, այն է յունիս 1. սեպտեմբեր 1 ու նոյեմբեր 1. իսկ սկսած 1902 թուականի Յունուար 1-ից կը հրատարակուի իւրաքանչիւր ամիս:

Հարկ եղած դէպքերում, ԺԱՄԱՆԱԿը կը լինի պատկերազարդ և կը տպագրէ եւրոպական երկերի բնագիրը կարգապահ լեզուներով, հայերէն թարգմանութեան հետ միասին:

Բացուած է բաժանորդագրութիւն 1901 և 1902 թուականներին: Բաժանորդագրութեան պայմանները պարզուած են հետեւեալ աղիւսակի մէջ: Բաժանորդագրութիւն 1901 բուսկանի (կիսամետր)

- Ռուսաստան 3 ռուբլի.
- Անգլիա 7 շիլին,
- Ֆրանսան, Պուլկարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպտոս, Յունաստան, Աւստրիա. 8 ֆրնք.
- Ամերիկա 1 քօլար (ոսկի)
- Բաժանորդագրութիւն 1902 բուսկանի (12 գիրք)
- Ռուսաստան 10 ռուբլի
- Անգլիա 1 ֆնտ. ստերլին
- Ֆրանսա, Բուլկարիա, Պարսկաստան, Ռումանիա, Թիւրքիա, Եգիպ.



աստ, Յունաստան, Աւստրիա . 25 ֆրն .
Բաժանորդագրութիւն 1901 եւ 1902
ըրակաւնեւերի համար (15 գիրք)
Ռուսիա 12 ուոբլի
Անգլիա . 1 ֆնա . ստերլ . և 7ը շիլ .
Ֆրանսա, Բուլղարիա, Պարսկաս-
տան, Ռումանիա, Թուրքիա, Եգիպ-
տոս, Յունաստան, Աւստրիա, 30 ֆրն .
Ամերիկա 6 դոլար
Ամենայն տեղերից գիծել հետեւեալ
հասցէով .

Paris, (France) 64 rue Claude-
Bernard Directeur de la Revue
« Jamanak » S. Hakhoumian

**ԱՂՄԱՍԻՅ ՅԵՐԲԱՎԱՆՈՒ-
ՓՈՒՆ ՄԷ**

Թուականէս մօտ մէկ ամիս առաջ
թուրք մը կ. Պօլիսէն կը մեկնէր
ուրիշ թուրք մը լրտեսելու պաշտօ-
նով . Լրտեսը մինչև որ Բարիզ կը
հասնի ստացած բոլոր փողերը կը
ծախսէ . այնպէս որ տեղս հասնելուն
գրպանը մէկ սանդղիմ չմնար . ուստի
կը գիտէ թրքաց Դեսպանատունը և
կը բացատրէ իւր վիճակը . Դեսպանը
հեռագրով խորհուրդ կը հարցնէ կ.
Պօլսէն, և հրաման կ'ատանայ կ.
Պօլիս վերադարձնել յիշեալ լրտեսը,
ուստի վերջինը կը կանչուի դեսպա-
նատուն և իրեն կը տրուի 350 ֆր.
իւր ճանապարհածախս, իրեն կըսեն
նոյնպէս թէ ճամբորդութեան տամ
սակն ալ պիտի գնեն, ուստի կը
խնդրեն որ այսինչ օրը կայարան
գտնուի . Մարդը կը խոստանայ իրեն
պատուիրածներուն պէս վարուիլ և
կը մեկնի .

Այդ միջոցին դեսպանատունը Բա-
րիզ գտնուող ուրիշ թուրք երեսա-
սարգի մ'ալ—որը բան գործ չունէր
Բարիզի մէջ մայրաքաղաքիս փողոց-
ները կը չափչփէր իւր շատ մը ըն-
կերներուն պէս— կը հրամայէ յիշ-
եալ լրտեսին հետ կ. Պօլիս վերա-
գառնալու . Սա ալ իւր հաւանութիւ-
նը կուտայ .

Երկուքը մէկէն յիշեալ օրը կայա-
րան կ'երթան ուր կը հանդիպին դես-
պանատան մարդիկներէն միոյն, որն
իրենց համար երկու տոմսակ կը գնէ
և զանոնք իրենց տեղերն զետեղելէն
յետոյ՝ երթա՞ր բարով ըսելով կը
վերադառնայ իւր գործին .

Երկու թիւրքերը անգամ մը որ
իրենց տեղերը կը գետնազուրկ կ'սկսին
քննել խոշոր թղթածրար մը որուն
վրայ խոշոր խոշոր կնիքներ կային
և զոր իրենց յանձնած էր դեսպա-
նատան պաշտօնեայն, Դեսպանի կող-
մէն կ. Պօլիս տանելով կառավարու-
թեան յանձնելու . Զարհուրելով կը
մտածեն թէ զուցէ այդ թուղթերուն
մէջ իրենց մահուան վճիռը կը գտնուէր
ուստի քանի մը վայրկեան մտածելէն
յետոյ դեռ չողկեալքը չմեկնած, եր-
կուքը մէկէն կիջնան իրենց տեղերէն
և ուղղակի կուգան Ռուսանդական
թաղին Սուվլէ սրճարանը .

Սրճարան հասնելէն մի քանի ժամ
յետոյ— շնորհիւ անշուշտ մտերիմ

բարեկամներու— Դեսպանատունը կ'ի-
մանար երկու երեսասարգիներու խա-
ղացած խաղը .

Դեսպանը անմիջապէս բողբ մը
կը զրկէ Բարիզի սատիկանութեան .
Երկու ծայրեալ ստորիկները գիշեր-
ուան ժամը 12էն յետոյ՝ երբ երկու
երեսասարգիները սրճարանէն դուրս
կելլէին ձերբակալեցին զանոնք իւր
գող և առաջնորդեցին բանտ .

Այն երեսասարգը որմէ խնդրած
էին որ Պօլիս վերադառնայ ազատ-
ուեր է, ըսելով որ վերջին պահուն
միաբը փոխեր էր և կեցէր էր Բա-
րիզ .

Գալով լրտեսին որ 350 ֆր. ստա-
ցած էր վերադառնալու դեռ բանտն է .
Այս բանը պատահեցաւ անցեալ
շաբթու սկիզբը հազիւ 8 օր առաջ .
Փարի-Նուվէշ

**ՏՈՒՍԱ ՄԻՒՋԻԼՍԱՆ
(ԻՍԼԱՄԱԿԱՆ ՕՐԷՆՍԳԻՏՈՒԹԻՒՆ)**

Ս. ՓԱՓԱՋԵԱՆ
Սոյն հրատարակութեան առաջին
մասը Եգիպտական արգարութեան
Գործոց Նախարարութեան կողմէն
նիւթական վարձատրութեամբ գնա-
հատուած և Եգիպտոսի դատարաննե-
րուն մէջ գործածութիւնը պաշտօ-
նապէս ընդունուած է .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
Ընդհ. սեսութիւն ժառանգական
օրինաց և ժառանգութեան իրաւանց
ձագման վրայ . — ժառանգութեան
պայմանները . — Ազգականութիւն և
աստիճանները . — Գերութիւն և ժա-
ռանգութեան հետ ունեցած կապերը . —
ժառանգութեան զրկող պատճառները . —
Մարդասպաններու ժառանգութիւնը .
— Տէրէթ (մարդու արեան զինը) . —
ժառանգութեան մը պարտքը և պա-
հանջը . — ժառանգորդներու կարգը
իրենց աստիճաններովը .

ժառանգութեան օրէնքին տրամա-
դրութիւնները ուրոյն ուրոյն մեկնը-
ւած են . Գրքոյկին վերջը գրուած է
ցանկ մը որ մասշնչի եզանակաւ կը
նշանակէ թէ ժառանգութեան օրինա-
կան բաժինները ինչպէս կը բաժնը-
ւին .

Երկրորդ մասը մօտ ժամանակէ
լոյս պիտի տեսնէ՝ խնամակալութեան
կտակի, Սպանութեան, Արեան Գնոյ
վրայ ընդարձակ ծանօթութիւններով .
Գին 10 ԴԱՏ. ՈՂՂ

**ՊԱՆԳ ԼԻՍՆԵՋ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾԱԿԱՆԱԼ ԵԳԻՊՏՈՍԻ
Մ. ՍՕՍՕՅԵԱՆ**

Լիոնի հանրաձայնութիւնը գրամատուցը,
այս անգամ ունեցաւ իւր Եգիպտոսի
գործակալին ալ, Տ. ՄԿրտիչ Սօսյեան,
որ իւր հրապարակային ցոյց տուած
պարկեշտ գործունէութեամբն ամե-
նուս վստահութիւնը կը վայելէ .

Սոյն գործակալութիւնը, 11 Սեպտ.
թիւ իրեն յանձնուած և Լիոնի բաղա-
քատեութիւնէն պաշտօնապէս վա-
ւերացուած փոխանորդագրի համա-
ձայն, պիտի կատարէ Պանգ Լիոնէզի
միջոցաւ ամեն տեսակ զբամական և
Քոնէտի Ֆօնտիլէի, վիլ սը Բարիի և
Գաղղիական ամէն արժեթուղթերու
գործողութիւններ, զանձուցներ . Ամա-
կան ընչին զուամբի մը խնայողու-
թեամբ ձեռք կը բերուի քիչ ատենէն,
պահեստի բաժնեթուղթ մը, վիճակա-
հանութեամբ երաշխաւորուած .

Փափարողները հաճին զիմել Նիւ-
պատի վրայ փաստարան Ռարթաքիի
գրասենեակը .
Թղթակցութիւն և կամ գրամ զըր-
կել հետեւեալ հասցէին .

**Մ. ՍՕՍՕՅԵԱՆ
Ի ԳԱՀԻՐԷ**

Ա. Զ. Դ
Շատերու կողմէ յայտնուած վա-
ւերի մը զսհացում տալու և մեր
ընթերցողներու գիւրութիւն մը ըն-
ծայելու նպատակով, այսուհետեւ մեր
թերթը հատով պիտի ծախուի Շա-
րա Ապո-էլ-Ալիդի սկիզբը Գ. ԿԱՐԱ-
ՊԵՏ ԵՐԶՆԿԱՅԵԱՆԻ խանութը ինչպէս
նաև Գլոթ-Պէյ փողոցի ծայրը և թը-
րամէյններու կայարանին մօտ ծխա-
վաճառ Գ. ՄԱՐՏԻՐՈՍ ԳՈՍՍՊԵԱՆԻ
քով .

ՊԵՍԵՆ-ՇԻՇՄԱՆԵԱՆ ԸՆԿ.
ԱՍԵՐԻԿԵԱՆ ԴԵՐՁԱԿԵՐ
ԱՐԱՅ ԵՆ ՏԻԿԱՆՅ
ԵՒ ԶԵՒԿԻՏՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑ
Ապսինի մեծ պողոտային վրայ Տայիբայի
Սանիթի դիմացը, Ասիական երկաթուղի
գործիներու վանճառատները .

Վերջերս Ամերիկայէն հօս եկած
հաստատուած ըլլալով կը յայտարա-
րենք արդոյ հասարակութեան թէ՛
պատրաստ ենք գոհացնել մեզ զիմոյ
Պատ. յաճախողները, գործի մար-
րութեան, գիներու չափաորութեան
և ճշգրտագոյնութեան կողմէն .

Մեր գործատեղոյն մէջ կ'աւան-
դուին նաև ձեռագրութեան գասեր
ամերիկեան ամենավերջին կատարե-
լադորձուած մէթոտով .
Մանրամասնութեանց համար գիմել
մեր գործատեղին .

Le Gérant J. MUNIER
Տպա. «Միութիւն» . — Թ. Ս. Փափագեանի

Տ Պ Ա Ր Ա Ն
Ի ԳԱՀԻՐԷ
ԱՊՏԻՆ ՓՈՂՈՑ, ՄՈՒԳԱԹԹԱՄԻ ՃԻՇԴ ԴԻՄԱՑ
ՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԹՈՒԳՈՄ Ս. ՓԱՓԱՋԵԱՆ
Սոյն նորակազմ տպարանին մէջ կը տպուին հայերէն ու երոպական լեզուաւ ամեն տեսակ հրատա-
րակութիւններ, պարբերական թերթեր, յայտարարութիւններ, շրջաբերականներ, այցետոմսեր, մահազգեր,
հարսանեաց հրաւիրագրեր, կանոնագիրներ, նամակազուրկներ, պահարաններ, հաշուեցուցակներ ևն .
Յանձնարարութիւնները կը կատարուին փոքրով, ամենայն խնամով և ճշգրտագոյն տպագրութեամբ .
ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆԵՐՈՎ